ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսին և տիկին Ալմա Ադամկիեին՝ ուղեկցությամբ ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի:

Ողջունելով Լիտվայի Հանրապետության նախագահի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը ներկայացրեց նրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում և հետխորհրդային շրջանում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործունեությունը: *«Փառք ենք վերառաքում առ Աստված, որ երկու մեր ժողովուրդների պարագային էլ խորհրդային տարիները չկարողացան խեղել մարդկանց հոգևոր կյանքը, նրանց հոգին և Քրիստոսի հանդեպ սերը: Քրիստոսի հավատով և հույսով մեր ժողովուրդների զավակները կարողացան առավել ամրապնդել իրենց հավատը, դիմագրավել փորձություններին և կերտել անկախությունն իրենց երկրների»,*- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով, որ Տերն ամուր պահպանի փոխհարաբերությունները երկու ժողովուրդների և պետությունների և այդ կապերի նորանոր զարգացումներով առավել շենացնի երկու հանրապետությունները՝ ի բարօրություն ժողովուրդների խաղաղ, ստեղծագործ կյանքի: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց Լիտվայի նախագահին Հայոց ցեղասպանության ճանաչման առնչությամբ և գոհունակությամբ անդրադարձավ նաև այն հոգատար վերաբերմունքին, որ Լիտվայի իշխանությունները ցուցաբերում են հայ համայնքի նկատմամբ, ովքեր քրիստոնյա եղբայրների հետ միասին ապրում են համերաշխ, եղբայրական սիրով՝ ունենալով բոլոր ազատություններն ու հնարավորությունները կազմակերպելու իրենց հոգևոր, ազգային ու մշակութային կյանքը:

Իր հերթին, Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսը, իր հարգանքը հավաստելով Հայոց Եկեղեցու և Հայոց Հովվապետի նկատմամբ, անդրադարձավ Եկեղեցու կարևոր դերին հասարակության և հատկապես երիտասարդ սերնդի մեջ հոգևոր, բարոյական արժեքների պահպանության և ամրապնդման գործում: «...Երբ նայում ես ձեր պատմությանը, մեծ հարգանքով տեսնում ես, թե Ձեր Եկեղեցին ինչ քրիստոնեական հիմնարար արժեքներ է տվել իր ժողովրդին»,- նշեց իր խոսքում պրն Ադամկուսը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև միջեկեղեցական և միջկրոնական հարաբերություններին, ինչպես նաև խոսվեց աշխարհում խաղաղության, ժողովուրդների միջև եղբայրության և սիրո հաստատման գործում քրիստոնեական Եկեղեցիների ջանքերի մասին:

Հանդիպմանը ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի պատասխանատու Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Լիտվայի Հանրապետության նախագահն այցելեց նաև Վեհարանի թանգարան, եղավ Մայր Տաճարում:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԵՎ ՆՐԱ ՏԻԿՆՈՋԸ ՇԱՆՈԹԱՑՆՈՒՄ Է Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԻՆ